ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ք. Ստեփանավան ---------.---------- .2025 թ.

« Նեկտար » հանգստյան տունը, ի դեմս տնօրեն Արգիշտի Ղուկասյանի, այսուհետ սույն պայմանագրի տեքստում՝ «Կատարող», մի կողմից _____ (անձնագիր՝ _____, տրված _____թ., _____-ի կողմից, բնակվող _____), այսուհետ սույն պայմանագրի տեքստում՝ «Պատվիրատու», մյուս կողմից, միասին վանվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

2. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ տրամադրելով համապատասխան փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են դրանց իրականացման համար:

1.2 Կատարողը պարտավորվում է մատուցել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ում նշված ծառայությունները:

1.3 Ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվում է Հավելվածում:

1.4 Ծառայությունները համարվում են մատուցված հավելվածում նշված ծառայությունների ժամկետի ավարտի պահից:

1. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

1.1. Կատարողը պարտավոր է՝

1.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում՝ համաձայն իր կողմից սահմանված ընթացակարգի:

1.1.2. Կատարողը Պատվիրատուի պատվերն ընդունում և հաստատում է տվյալ ժամանակահատվածում հանգստյան տանը առկա հնարավորությունների սահմաններում:

1.2. Կատարողն իրավունք ունի՝

1.2.1. Միակողմանիորեն հրաժարվել Պայմանագրի կատարումից Պատվիրատուի կողմից (նախապես պայմանավորված) վճարումները ժամանակին չկատարելու դեպքում՝ վերջինից պահանջելով կրած վնասների հատուցում.

1.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

1.3.1. Ստանալ Պայմանագրով նախատեսված ծառայությունները,

1.3.2. Ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

1.3.3. Ստանալ անձնական անվտանգության, կյանքի, առողջության, սպառողի իրավունքների և գույքի պաշտպանություն:

1.4 Պատվիրատուն պարտավոր է՝

1.4.1 Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին և կարգին համապատասխան:

1.4.2 Փոխհատուցել իր մեղքով Կատարողին հասցված վնասները՝ վճարելով վնասված առարկայի շուկայական գինը:

1.4.3 Պահպանել Պայմանագրի հավելված 2-ով նախատեսված պայմաններն ու կանոնները:

2. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

2.1. Սույն պայմանագրով Ծառայությունների գինը կազմում է _____ ՀՀ դրամ: Վերոնշյալ գումարը ներառում է հարկերը և պարտադիր այլ վճարները:

2.2. Վճարումը կկատարվի մինչև սույն պայմանագրով նախատեսած ծառայությունների ստանալու օրվանից 5 օր առաջ : Պայմանագրի կնքման պահին նախատեսվում է կանխավճարի վճարում ուղեգրի արժեքի մեկ օրվա գումարը, որը ամրագրումը չեղարկելու դեպքում ենթակա չէ վերադարձման:

2.3. Պատվիրատուի կողմից Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում նրա նկատմամբ կիրառվող տուգանքի չափ է սահմանվում՝

ա)Պայմանագրի գնի 25% (քսանհինգ տոկոսի) չափով, եթե Պատվիրատուն Պայմանագրից հրաժարվել է ոչ ուշ, քան Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ.

բ) Պայմանագրի գնի 50% (հիսուն տոկոսի) չափով, եթե Պատվիրատուն Պայմանագրից հրաժարվել է սույն ենթակետի <ա> պարբերությամբ նախատեսված ժամկետի խախտմամբ, կամ ընդհանրապես չի օգտվել Պայմանագրով նախատեսված ծառայություններից:

2.4. Պատվիրատուի կողմից սեփական կամքով և նախաձեռնությամբ Հավելվածում նշված, Կատարողի կողմից մատուցված ծառայություններից չօգտվելու կամ ոչ ամբողջ ծավալով օգտվելու դեպքում Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից չստացված ծառայությունների մասով համապատասխան գումարի չափով փոխհատուցում տրամադրելու համար:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ – ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագիրը կնքվում է մինչև _____թ. և ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

5.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին մեկ շաբաթ առաջ գրավոր ծանուցելով:

5.3. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ երկկողմանի ստորագրմամբ:

5.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

5.5. Սույն պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝

Ազգանուն, անուն ----------

Հասցե՝ ----------

Անձնագիր՝ N----------

Տրված՝ ---------- *ի կողմից*

Սոց. քարտ ----------

Բանկ՝ «----------»

Հեռ՝. ----------

E-mail՝ ----------

(ստորագրություն)

Կատարող՝

«ԱՁ Արգիշտի Ղուկասյան»

Իրավ. հասցե՝ ք.Ստեփանավան, 4միկ,4փ, 4տ

Գործ. հասցե՝ ք.Ստեփանավան,Ավետիսյան 43/1

ՀՎՀՀ՝67032883

Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ»ԲԲԸ

Հ/Հ՝ 220249676036000

Հեռ.՝ 055070284/077070284

E-mail՝ nectar.hotel.stepanavan@gmail.com

Վեբ կայք nectar-hotel.am

Տնօրեն՝ *Արգիշտի Ղուկասյան*

Հավելված 1

Հյուրանոցային տնտեսության օբյեկտի լրիվ անվանումը	« Նեկտար » հանգստյան տուն
Հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրը	Ք. Ստեփանավան Ավետիսյան 43/1
Տևողությունը (գիշերների քանակը)	
Ամրագրված սենյակի տիպը և կարգը	ստանդարտ երկտեղանի ստանդարտ երեքտեղանի ընտանեկան
Սենյակում հյուրերի թիվը (չափահաս/երեխա)	
Սենյակում հյուրերի անունները	
Ժամանման տարի, ամիս, օր, ժամ	
Մեկնման տարի, ամիս, օր, ժամ	
Սննդի կազմակերպման և մատուցման ծառայության հաճախականությունը, պայմանները	Նախաճաշ----------3000 ՀՀ դրամ Ճաշ ----------3000 ՀՀ դրամ Ընթրիք ----------3000 ՀՀ դրամ
Փաթեթի գնի մեջ ներառված այլ ծառայություններ	Սողանի թենիս, սեղանի խաղեր, տաղավարներ, ճոճանակներ, գամակներ
Կացության մեկ գիշերվա արժեքը	7000 ՀՀ դրամ
Զեղչեր	Մինչև 2 տարեկան անվճար 2-6 տարեկան 50% զեղչ

Հավելված 2

Պատվիրատուն պարտավոր է՝

1. Հարգալից լինել աշխատակազմի և մյուս հաճախորդների հետ:
2. Խնամքով վերաբերվել Կատարողի գույքի հետ:
3. Շենքի ներսում ծխելը խստիվ արգելվում է և խախտման դեպքում կգործեն օրենքով նախատեսված վարչական տուգանքները:
4. Ժամը 23:00-ից 8:30 հարգել մյուս հաճախորդների հանգստի իրավունքը՝ պահպանելով լռություն:

Պատվիրատու՝

Ազգանուն, անուն ----------

Հասցե՝ ----------

Անձնագիր՝ N----------

Տրված՝ ---------- *ի կողմից*

Սոց. քարտ ----------

Բանկ՝ «----------»

Հեռ՝. ----------

E-mail՝ ----------

(ստորագրություն)

Կատարող՝

«ԱՁ Արգիշտի Ղուկասյան»

Իրավ. հասցե՝ ք.Ստեփանավան, 4միկ,4փ, 4տ

Գործ. հասցե՝ ք.Ստեփանավան,Ավետիսյան 43/1

ՀՎՀՀ՝ 67032883

Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ»ԲԲԸ

Հ/Հ՝ 220249676036000

Հեռ.՝ 055070284/077070284

E-mail՝ nectar.hotel.stepanavan@gmail.com

Վեբ կայք nectar-hotel.am

Տնօրեն՝ *Արգիշտի Ղուկասյան*